ՉԻՎԱ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Սեդա Հարությունյան
Հեռախոս՝ +37493-73.75.85

Չիվա գյուղը գտնվում է Վայոց ձոր մարզի հարավ-արեմտյան մասում, Եղեգնաձոր-Երևան մայրուղու վրա, Վեդի-ներքին Արփա նախալեռնային գոտում, Ելփին գետի աջ ու ձախ ափին: Մտնում է Արենի համայնքի կազմի մեջ: Ծովի մակերևույթից բարձր է 1116 մ: Գյուղը մարզկենտրոնից ունի 23 կմ հեռավորություն, իսկ մայրաքաղաքից՝ 102 կմ: Ձմեռվա տևողությունը 4 ամիս է:

Գյուղի մասին հիշատակումներ կան Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատության մեջ՝ 13-րդ դարի թվագրությամբ: Սակայն դա սկիզբը չէ, այն ունի առավել հին պատմություն, ըստ որի գյուղն անվանվել է նաև Չվա, Չուվա և այլն: Գյուղի անունը չի ստուգաբանվում:

Ժողովրդական ավանդության համաձայն՝ 735թ. Մոզի կործանիչ երկրաշարժից ահաբեկված փախչող մարդիկ հասնում են Չիվայի տարածք, հանգիստ առնում և գոչում՝ չիք վայ, չկա վայ, որտեղից էլ առաջանում է գյուղի անունը:

Չիվան հարուստ գյուղ է եղել: Չիվայի ձորը հայտնի է բազմատեսակ պտղատու այգիներով: Գյուղը վանքապատկան է եղել, այն 13-րդ դարում հատուկ հրովարտակով տրվել է Ջալալ Օրբելյանին որպես կալվածք:

Մետաքսի ճանապարհի մի ճյուղը Սելիմով հասնելով Արենի, մի ճյուղով էլ թեքվում էր Չիվա՝ ուղղություն վերցնելով դեպի Դվին և Այրարատ: Ենթադրվում է, որ գյուղը բնակեցված է եղել դեռևս հեթանոսական ժամանակաշրջանից: Այդ մասին են վկայում հին գյուղատեղի տարածքում հայտնաբերված կարասներով թաղումները:

Գյուղը մի քանի անգամ կարճ տեղափոխումներ է ապրել, սկզբում՝ ձորամեջ, ապա՝ դիմացի սարալանջ, ուր կան քրիստոնեական վկայություններ՝ ժամտուն, խաչքարեր: Ռուս-պարսկական պատերազմից հետո այստեղ են եկել հայ-գաղթականներ Խոյից, Սալմաստից: Երկար ժամանակ Չիվա գյուղում հայերի հետ ապրել են նաև այլազգիներ: 1988 թվականից գյուղն ամբողջապես դարձավ միատարր:

Բնակչության հիմնական զբաղվածությունն անասնապահությունն ու հողագործությունն է: Մշակում են՝ ծիրան, դեղձ, խաղող, բանջարաբոստանային կուլտուրաններ և հացահատիկ:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, բուժկետ: Գյուղում գործում է առևտրի մի քանի կետեր:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Չիվա գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 3 հուշարձան: